



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

[Handwritten signature]



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«28» 02 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 84

Ձեռնարկողը՝

Քաղաքացի Ալբերտ Թառոյան

Ք. Երևան, Աթոյան անցուղի 7 շ. բն. 20

Գործունեությունը՝

Երևան քաղաքի Բագրևանդ 82 հասցեում նախատեսվող արտադրական շինությունների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրենի ժ/պ՝



[Handwritten signature]

Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 84

«26» 09 2018թ.

Քաղաքացի Ալբերտ Թառոյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Բազրևանդ 82 հասցեում նախատեսվող արտադրական շինությունների կառուցման նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	քաղաքացի Ա. Թառոյան
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ
Տեղադրման վայրը՝	Երևան, Նոր-Նորք վարչական շրջան
Գործունեության կատեգորիան	/Գ/ կատեգորիա

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի նախատեսում է Երևան քաղաքի հյուսիս-արևելյան մասում՝ Նոր-Նորք վարչական շրջանի Բազրևանդ 82 հասցեում, արտադրական շինությունների կառուցում: Տարածքը հանդիսանում է Ալբերտ Թառոյանի սեփականությունը, որի մակերեսը կազմում է 3.567831հա:


Գործունեության նպատակն է կառուցել շինություններ և ենթակառուցվածք արտադրական գործունեություն ծավալելու նպատակով /տպագրական, հավաքման և այլ տեսակի աշխատանքներ/: Արտադրական շինության մի մասում կիրականացվեն տպագրական աշխատանքներ: Շինությունների հիմնական մասը հետագայում, վարձակալական կամ այլ հիմունքներով, կտրամադրվեն տարբեր արտադրություններ հիմնելու համար:

Շինության նախագիծը մշակված է համաձայն Երևանի քաղաքապետի կողմից 01/06/2018թ. համաձայնեցված N 01/18-07/1-Թ-703-390 ճարտարապետահատակագծային առաջադրանքի:

Շինությունները նախատեսվում են իրականացնել 1 հարկանի: Նախատեսվում են ամբողջությամբ բաց տարածքներ՝ արտադրական նպատակներից ելնելով: Բոլոր ճակատները նախատեսվում է մշակել բարձրորակ դեկորատիվ ցեմենտ -ավազե շաղախով:

Տանիքը լանջավոր է /երկթեք/ սենդվիչ պանելներով, կազմակերպված ջրահեռացմամբ: Ջրահեռացումը կազմակերպված է սեփական հողատարածքի մեջ՝ արտահոսքը հարևան հողամաս բացառված է: Տարածքը նախատեսվում է պարսպապատել:

Նախատեսվում է կառուցել հետևյալ շինությունները՝ պահեստ 6346.3քմ, տնտեսական շինություն՝ 45.4քմ, պահեստային տնտեսություն՝ 3488.7քմ, ենթակայան 63.7քմ, հնոց 14.8քմ, արտադրամաս՝ 891.3քմ, պահակատուն՝ 76.1քմ, վարչական շենք՝ 556.6քմ, պահակատուն՝ 34.3 քմ, պարիսպ՝ 156.0քմ:



Շինարարության ամբողջ տևողությունը կազմում է մեկ տարի, իսկ հողային աշխատանքները և հիմքերի կառուցումը կտևի 4 ամիս:

Աշխատանքների ընթացքում ընդհանուր առմամբ փորվելու հանվելու է 11673մ³ հող և գրունտ, այդ թվում նաև հողաբուսաշերտ (բերրի հող)՝ 934մ³:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի՝ 216մ³ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար՝ 220.մ³, ընդամենը 436.0մ³ ծավալով:

Ջրամատակարարումը կատարվելու է տարածքի մոտով անցնող ջրատարից, որը միացված է Երևանի քաղաքային ջրամատակարարման ցանցին:

Կոյուղին նախատեսվում է միացնել հարևանությամբ անցնող քաղաքային կոյուղատարին:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում պայմանավորված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների և շինաղբի տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ: Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում կավելանա աղմուկի մակարդակը: Աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ.

- փոշու արտանետումներ՝ հիմքերի փորման ընթացքում,

- դիզելային վառելիքի արտանետումներ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

Նախատեսվող աշխատանքների ընթացքում կառաջանան հետևյալ վնասակար նյութերի արտանետումները՝ չդիֆերենցված մասնիկներ /փոշի/, ածխածնի մոնօքսիդ, ազոտի երկօքսիդ, մուր /մոխիր/, ծծմբի երկօքսիդ:

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են.

- շինարարական աշխատանքների/ փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում,

- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը,

- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգաբերման իրականացում:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Բետոնի խառնուրդի պատրաստման համար տեխնիկական որակի ջրի օգտագործում, տարածքում առկա ոռոգման ջրացանցից,

- Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- Տարածքի հոսքերի միավորում՝ մեկ բակային ցանցում և միացում սելավային ջրացանցին:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Բերրի հողի կտրումը, հանումը, պահեստավորումը և հետագա օգտագործումը նախատեսվում է իրականացնել օրենքով սահմանված կարգով: Բերրի հողի պահպանման համար՝ տպարանի շենքի մերձակա մասում, նախատեսված է պահեստ՝ 320մ³ մակերեսով: Պահեստը կլինի ծածկի տակ, եզրերի մոտ կտեղադրվեն հողային թմբեր:

- Շինարարական նյութերի և քայուղերի պահեստները կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա:



- Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

- Տարածքը կբարեկարգվի և կկանաչապատվի: Նախատեսվում է օգտագործել շուրջ 100 տեսակ դեկորատիվ և պտղատու ծառեր ու թփեր:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,

- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տեխնիկական միջոցները և ավտոտրանսպորտի շարժիչները,

- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվելու դրանց աղմուկի մակարդակին,

- բացառվելու է մի քանի տեխնիկական և տրանսպորտային միջոցների միաժամանակյա շահագործումը:

Ներկայացված նախնական գնահատման հայտով իրականացվող բնապահպանական միջոցառումների համար նախատեսվել է 640,0 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

Եզրահանգում՝ Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ: Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարության ընթացքում առաջացած շինաղբը, կենցաղային աղբը, անհրաժեշտ է հեռացնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

- Հետագայում նախատեսվող արտադրությունները՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում, մինչև արտադրական գործունեության իրականացումը անհրաժեշտ է սահմանված կարգով ներկայացնել բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացի Ալբերտ Թառոյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Բագրևանդ 82 հասցեում նախատեսվող արտադրական շինությունների կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Մասնագետ՝



Ա. Դոնոյան

Ձ. Ղուռնայան